

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼ ԿԱԶՄԵՆՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԿՈՒՄԸ **2009** ՎԵՐՋԻՆԻ ԿԱԶՄԵՆՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԿՈՒՄԸ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼ ԿԱԶՄԵՆՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԿՈՒՄԸ» ԿԱՌԱՐԱԿՈՒՄԸ

Հինգ տարի է՝ այդ նախագծով աշխատում են Ջավախեթիում: Այն հաջողությամբ իրականացվում է, ինչի վկայությունն են վերջին տարիների հաջողություններն ու ուսումնասիրությունների արդյունքները:

Մենք շատ լավ գործերի նախաձեռնողներ ենք եւ դրանցից մեկը կանաչապատման հետ կապված գործողությունն էր: Քարքարոտ եւ կլիմայական բարդ պայմանների պատճառով, Ջավախեթիում բնական անտառների տարածքները փոքր են, եւ մարդկանց օգնության կարիքն այստեղ առավել նշանակալից է:

Այդ հիմնախնդիրը անհանգստացնում է նաեւ Ախալքալաքի շրջանում Վաչիան գյուղին, որտեղ ներկայումս աշխատում են: Դպրոցի բակի մեծ տարածքը զուրկ է կանաչապատումից, եւ դատարկության զգացում է առաջացնում: Որոշեցի բակում անցկացնել ծառատնկումներ: Դպրոցի տնօրեն Մնացական Աթոյանը ջերմորեն հավանություն տվեց մեր նախաձեռնությանը:

Օգնության համար դիմեցինք ազգային անտառային տնտեսության Սամցխե-Ջավախեթի վարչության նախկին պետ Լեւան Խոզրովանիձեին, որն անմիջապես պատրաստակամություն հայտնեց մասնակցել այդ գործին: Դիմումից անմիջապես հետո, դպրոց եկան անտառային վարչության աշխատակիցները, Ասպինձա-Ախալքալաքի անտառային տեղամասի պետ Գուրամ Մելիքիձեն, անտառային տնտեսության մասնագետներ Տարիել Կապանաձեն եւ Թեյմուրազ Մոդեբաձեն: Նրանք ուսումնասիրեցին տարածքը եւ համաձայնեցրին, թե որտեղ ինչ տնկիներ են տնկելու: Անտառային վարչությունը ոչ միայն անվճար փոխանցեցին տնկիները, այլեւ ստանձնեց դրանց տեղափոխման ծախսերը եւ դպրոցի տնօրինության, մանկավարժների, աշակերտների ու ծնողների հետ մասնակցեց ծառատնկմանը: Ծառատնկմանը մասնակցեցին նաեւ հարեւան գյուղերի բնակիչները: Առաջին տնկին դպրոցի բակում տեղադրեցին դպրոցի տնօրեն Մնացական Աթոյանը եւ անտառային տնտեսության ղեկավար Լեւան Խոզրեւանիձեն: Իրենց ակտիվությամբ առանձնապես աչքի ընկան մեր դպրոցի մանկավարժներ Արեւիկ Գաբրիելյանը, Լարիսա Մելտոնյանը, Մարտին Ավենյանը, Սեդրակ Իգիթյանը, աշակերտներ Մանուշակ Բարսամյանը, Անդրանիկ Քեիյանը, Նարինե Ոսկանյանը, Սերգեյ Մանասյանը եւ ուրիշներ:

Ըստ իս, մեր կատարած շնորհակալ գործը միայն սկիզբն է, քանի որ նման նախագծեր մշակվում եւ իրականացման շեմին են Ջավախեթի մյուս բնակավայրերում: Մենք՝ մանկավարժներս, դասավանդմանը զուգահեռ, այդ առումով էլ մեր հետքը պետք է թողնենք Ջավախեթիում: Պատահական չէ, որ այդ շնորհակալ գործն իրականացվում է Համայն Կրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի օրհնությամբ: Ցանկալի է, որ մեր նախաձեռնությունը ունենա իր շարունակությունը ինչպես մեր շրջանում, այնպես էլ մեր երկրամասում:

□□□□□□□□ □□□□□□□□ -□□□□□□